ԼԵՆԻՆՅԱՆ ԳԱՂԱՓԱՐՆԵՐԻ ԱՆԽՈՆՋ ՄԱՐՏԻԿԸ

Գ. Ա. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Անդրկովկասում մարքսիստական-լենինյան գաղափարների տարածման, սոցիալ-դեմոկրատական կազմակերպությունների հիմնադրման ու ամրապնդման պատմությունն անքակտելիորեն կապված է հեղափոխական աշխատանքի համար կենտրոնական Ռուսաստանից այստեղ աքսորված ռուս մարքսիստների ու բանվոր հեղափոխականների անմոռաց անունների հետ։ Պատմությանը քաջ հայտնի են Վ. Կուռնատովսկու, Ի. Կոգանի, Մ. Կալինինի, Լ. Կրասինի, Վ. Շելդունովի, Ի. Լուզինի, Գ. Ֆրանչեսկու, Ս. Ալիլուևի, Ի. Վացեկի, Ն. Կոզերենկոյի, Ֆ. Աֆանասևի, Ն. Պոլիտաևի և շատ ու շատ ուրիշների անունները, որոնց օրինակով Ռուսաստանի այս ծայրագավառում ցարական կարգերի դեմ մահու և կենաց կռիվ են մղել նաև մյուս ժողովուրդների ոչ քիչ զավակներ, որոնք մինչ այսօր անհայտ են մնացել սերունդներին։ Դրանցից է Պետերբուրգի համալսարանի շրջանավարտ, Շուշիի սոցիալ-դեմոկրատական խմբակների կազմակերպիչներից ու ղեկավարներից մեկը՝ Լ. Լ. Ստաբրովսկին։

Լյուդվիգ Լյուդվիգովիչ Ստաբրովսկին ծնվել է Բելոռուսիայի Մինսկ քաղաքում, 1881 թ. օգոստոսի 29-ին, ազնվականի ընտանիքում։ 1899 թ. ավարտելով տեղի արական գիմնազիան, նա ընդունվում է Պետերբուրգի համալսարանի ֆիզիկա-մաթեմատիկական ֆակուլտետի մաթեմատիկայի բաժանմունքը և ավարտում 1903 թ. մարտին[1].

Լ. Ստաբրովսկու հեղափոխական-մարքսիստական հայացքների ձևավորումը տեղի է ունենում 900-ական թվականների սկզբներին՝ Պետերբուր-

---

[1] *Տե՛ս* Справка Ленинградского обл. исторического архива от 7 апреля 1969 г., № 122.

գում սովորելու տարիներին։ Դա այն ժամանակն էր, երբ միջազգային հեղափոխական շարժման կենտրոնը Արևմտյան Եվրոպայից փոխադրվում էր ժողովրդական հեղափոխության բոլոր նախադրյալներն ունեցող Ռուսաստան, երբ անլեգալ մամուլում և գրականության մեջ լայնորեն լուսաբանվում էին ռուսաստանյան և միջազգային բանվորական շարժման մարքսիստական տեսության ու պրակտիկայի հարցերը։ Եվ ահա, այդպիսի մի ուշագրավ ժամանակաշրջանում, մայրաքաղաքի ուսանողության առաջավոր մասի շարքերում երիտասարդ Ստաբրովսկին ամենագործունյա մասնակցություն է ունենում հեղափոխական շարժումներին, որի համար էլ նրան, ուսումն ավարտելուց հետո, արգելում են ապրել և աշխատել երկրի բանվորաշատ վայրերում, ու նա ստիպված է լինում աշխատանք որոնել Ռուսաստանի ծայրամասերից մեկում՝ Անդրբկովկասում։

1903—1904 թթ. Լ. Ստաբրովսկին պաշտոնավարել է Շուշիի ռեալական ուսումնարանում, որպես մաթեմատիկայի ուսուցիչ և եռանդուն գործունեություն ծավալել սովորող երիտասարդության մեջ սոցիալ-դեմոկրատական խմբակների կազմակերպման ու ղեկավարման գործում[2]։

Շուշիի ռեալական ուսումնարանի բարձր դասարաններում սովորող երիտասարդության մարքսիստական հայացքների ձևավորման վրա բարերար ներգործություն է ունեցել Լյուդվիգ Ստաբրովսկին։ Լինելով մարքսիստորեն պատրաստված հեղափոխական գործիչ, նա խմբակի անդամների համար որոշակի ծրագրով տեսական տարբեր հարցերի շուրջը պարապմունքներ էր անցկացնում, երաշխավորում էր համապատասխան գրքերի ցուցակը, օգնում դրանք ձեռք բերելու։ Ստարրովսկու օգնությամբ սովորող երիտասարդներից շատերը միավորվեցին քաղաքի սոցիալ-դեմոկրատական խմբակներում։

Լ. Լ. Ստաբրովսկու խմբակի աշքի ընկնող անդամ ներկայումս Հայկական ՍՍՀ ԳԱ ակադեմիկոս Ա. Գ. Հովհաննիսյանն այդ շրջանի մասին հետագայում հիշում էր. «Լենինի գործերից մեզ մատչելի դարձան ավելի ուշ՝ մեր ուսանողության տարիներին։ Հիշում եմ, սակայն, որ նրա երկերից մեկը տեսա դեռ դպրոցի նախավերջին դասարանում։ Ես ու Կասպարովը նստում էինք վերջին նստարանին։ Ռուսաց լեզվի դասի ժամանակ Սլավան ծնկի վրա թերթում էր ստվար մի հատոր։ Դասատուն՝ Լյոնտևը այդ նշմարեց և նկատողություն արեց նրան։ Դա Լենինի «Развитие капитализма в России» նշանավոր գիրքն էր, որ լույս էր տեսել «Վ. Իլյին» կեղծ անունով։ Սլավան ինձ ասաց, որ այդ անվան տակ թաքնված է բոլշևիկների գլխավոր տեսաբան Լենինը»[3]։

Զգալի է Լ. Ստաբրովսկու վաստակը Շուշիում սովորող երիտասարդության մեջ մարքսիզմի տարածման գործում։ 1903 թ. ապրիլից մինչև 1904 թ. ամառը նա Շուշիում հանդես էր գալիս որպես ձևավորված մարքսիստ։ Առավել մեծ էր նրա համբավը ռեալական ուսումնարանում սովորող երիտասարդության շրջանում։ Սակայն շուտով սկսվում են հետապնդումները և հալածանք-

---

[2] Տե՛ս «История коммунистической партии Азербайджана», ч. I, Баку, 1958, էջ 69։

[3] Ա. Գ. Հովհաննիսյան, Հուշեր անցյալից, ՀՍՍՀ ԳԱ Լրաբեր հասարակական գիտությունների, № 3, 1966, էջ 69։

ներն ու Շուշիում նրա մնալը բոլորովին անհնարին է դառնում։ 1904 թ. հուլիսին Լ. Ստաբրովսկին տեղափոխվում է Աշխաբադ և այնտեղ մանկավարժական աշխատանքին զուգընթաց շարունակում հեղափոխական եռանդուն գործունեություն։ 1904 թ. ամռան վերջերին Ստաբրովսկու նախաձեռնությամբ Աշխաբադի հեղափոխական ոչ մեծ խմբակները միավորվում են մեկ սոցիալ-դեմոկրատական խմբի մեջ։ Նույն թվականի դեկտեմբերի 27-ին նա կարճ ժամանակով այցելում է Բաքու, իսկ 1905 թ. հունվարի 2-ին՝ Թիֆլիս և վերադառնալով, ձեռնամուխ լինում ՈՍԴԲԿ II համագումարի կողմից ընդունված կուսակցության ծրագիրը հեկտոգրաֆով բազմացնելու և տարածելու գործին։ Նա Բաքվից Աշխաբադ աքսորված հայտնի բոլշևիկ Արշակ Խաչիևի օգնությամբ մոտիկ կապեր է հաստատում Միջին Ասիայի մի շարք քաղաքների՝ Տաշքենդի, Կոկանդի, Վերնիի (Ալմա-Աթա) հեղափոխական գործիչների հետ։

1905 թ. հունվարի 9-ի լույս 10-ի գիշերը Լ. Ստաբրովսկին և նրա կինը՝ Քսենիա Պետրովնա Ստաբրովսկայան ձերբակալվում ու նետվում են Աշխաբադի կենտրոնական բանտը։ Արխիվային նյութերում ասված է, որ Լ. Ստաբրովսկին մեղադրվել է ցարական կարգերի դեմ հեղափոխական պրոկլամացիաներ ու կոչեր հրատարակելու և տարածելու, քաղաքական ցույցեր կազմակերպելու համար։ Ինչպես ցույց է տրված դատավճռում, որը կայացել է 1905 թ. մայիսի 24-ին, Լ. Ստաբրովսկին միայն 1904 թ. սեպտեմբերին հեկտոգրաֆով հրատարակել և տարածել է «Ко всем жителям Асхабада», «Аграрное движение в России» և «Политика Плеве и Святополк-Мирского» խորագրով պրոկլամացիաները, որոնց մեջ շոշափվել են աշխատավորներին հուզող բազմաթիվ հարցեր և կոչ է արվել ելնելու ինքնակալության տեղական իշխանությունների դեմ[4]։

Աշխաբադի կենտրոնական բանտում Լ. Ստաբրովսկին մնում է մոտ յոթ ամիս։ Բանտի խոնավ, սառը խուցում 1905 թ. հուլիսի 4-ին կտրվում է երիտասարդ աննկուն բոլշևիկ Լ. Լ. Ստաբրովսկու կյանքի թելը։ Նրա թաղումը վերածվեց Աշխաբադի աշխատավորների հզոր ցույցի։ Այն պսակի վրա, որ նրանք զգուշորեն և հպարտությամբ տանում էին դագաղի առջևից, գրված էր. «Լ. Լ. Ստաբրովսկուն, նրան, ով լուսավորեց մեզ ճշմարտության լույսով, Աշխաբադի բանվորներից և գիմնազիստներից»[5]։ «Քաղաքից գերեզմանոց տանող ամբողջ ճանապարհին,— նշել է գավառապետն իր զեկույցում,— թափորի մասնակիցները երգում էին հեղափոխական երգեր, առանձնապես «Վարշավյանկան» և հակակառավարական բովանդակություն ունեցող ճառեր արտասանում»[6]։

Լյուդվիգ Ստաբրովսկու գիտակցական կյանքը բոլշևիկների կուսակցությանն ու ժողովրդին հավատարմորեն ծառայելու իսկական օրինակ էր։

---

[4] Տե՛ս ЦГА Узбекской ССР, ф. И-133, оп. 3, д. 50, лл. 100—105.

[5] Տե՛ս ЦГА Узб. ССР, ф. И-133, оп. 3, д. 50, л. 100; Տե՛ս նաև «Проникновение революционных идей и развитие революционного движения в Туркменистане в 1881—1907 гг.», Ашхабад, 1962, стр. 87; «Очерки истории коммунистической партии Туркменистана», Ашхабад, 1965, стр. 23, 29.

[6] ЦГА Узб. ССР, ф. И-133, оп. 3, д. 50, л. 108

НЕУТОМИМЫЙ БОРЕЦ ЗА ЛЕНИНСКИЕ ИДЕИ

Г. А. ИОАНЕСЯН

Резюме

Один из первых организаторов революционных социал-демократических кружков и групп в Карабахе, Людвиг Людвигович Стабровский, всю свою жизнь посвятил великому делу служения партии и народу. В марте 1903 года, окончив Петербургский университет, будучи уже зрелым марксистом, он вынужден был искать работу в Закавказье, так как ему не разрешили жить и работать в городах центральной России.

В 1903—1904 гг. Л. Л. Стабровский работал учителем математики в Шушинском реальном училище. В это время значительно оживилась революционная работа в Шуше. Организовались социал-демократические кружки. Одним из руководителей кружка в Шушинском реальном училище становится Л. Л. Стабровский.

Летом 1904 г. Л. Стабровский переехал в Асхабад, где вскоре был арестован и заключен в асхабадскую центральную тюрьму. Здесь здоровье его резко ухудшается и 4 июля 1905 г. Л. Л. Стабровский скончался в тюрьме в возрасте всего 24 лет. Похороны революционера Стабровского, как об этом отмечалось в рапорте начальника асхабадской полиции, превратились в грандиозную политическую демонстрацию трудящихся гор. Асхабада.